

7-73

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՍԱՄԱՍ ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հակոբ Սամվելի Հակոբյան

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԻԳ.00.02- «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»
մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

Սեղմագիր

Երևան - 2011

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

- Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների թեկնածու, Ա. Ս. Ալեքսանյան
- Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղաքական գիտությունների դոկտոր, Ա. Վ. Աթանեսյան
- քաղաքական գիտությունների թեկնածու Ա. Ս. Բաղդասարյան
- Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2011թ. հունիսի 27-ին ժամը 13:00, ՀՀ Պաշտպանության Նախարարության Դրաստամատ Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 056 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, 0037 Երևան, Ուլնեցու փողոց 56/6:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ՊՆ ԱՌՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011թ. մայիսի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

Պատմական գիտությունների դոկտոր

Պ.Ա. Չոբանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ- ժողովրդավարացման ժամանակակից պայմաններում հրատապ են դառնում տեղեկատվական հասարակության կայացման և զարգացման ընթացակարգերի համակողմանի հետազոտությունները: Տեղեկատվական տեխնոլոգիաների առաջընթացն ու հասարակական կյանքի համակարգչայնացումն արմատապես վերափոխեցին հասարակական հարաբերությունների համակարգը: Արդյունաբերական քաղաքակրթության կայացումն աստիճանաբար փոխակերպեց նաև տեղեկատվական տեխնոլոգիաների հետագա առաջընթացը: Ատենախոսական ուսումնասիրության թեմայի տեսական արդիականությունը պայմանավորված է արդի տեղեկատվական հասարակության քաղաքագիտական և սոցիալ-փիլիսոփայական հետազոտությունների թերմշակվածությամբ: Ակնհայտ է հայրենական քաղաքագիտական հետազոտությունների որոշակի ներդրումը խնդրում, սակայն այն հեռու է ամբողջական պատկերացում տալուց տեղեկատվական հասարակության հայկական մոդելի, ՀՀ-ում դրա կայացման առանձնահատկությունների մասին: Տեղեկատվական հասարակության զարգացման դիպլեկտիկան, որը համատեղում է գոյություն ունեցող տեղեկատվական բազմազանությունը հաղորդակցության նոր ձևերի ստեղծման հետ, պահանջում է տեղեկատվական հասարակության համակարգի համակողմանի վերլուծություն:

Ժամանակակից պայմաններում տեղեկատվական հասարակության քաղաքագիտական վերլուծությունները պետք է նպատակաուղղված լինեն ոչ միայն վերջինիս կայացման քաղաքական նախադրյալների, այլև տեղեկատվական քաղաքականության մշակման և իրականացման հիմնախնդիրների դիտարկմանը:

Այսօր հայ հասարակությունը թևակոխել է տեղեկատվական հասարակության կայացման որոշակի փուլ, ՀՀ-ում մշակվել է ազգային անվտանգության ռազմավարություն, որում առանձնահատուկ տեղ ու դեր ունի տեղեկատվական անվտանգության ոլորտը: Հայ հասարակությունը ներքաշված է տեղեկատվական պատերազմների մեջ, ուստի այս ամենը խնդիր են դնում նորովի դիտարկել տեղեկատվական հասարակության կայացման խնդիրները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊՍԱԿՆԵՐԸ - Ատենախոսությունը նվիրված է հայ քաղաքագիտական մտքի կողմից դեռևս համակողմանիորեն չուսումնասիրված մի խնդրի՝ տեղեկատվական հասարակության կայացմանը:

Տեղեկատվական հասարակության կայացման արդի ուսումնասիրություններում առանձնահատուկ նշանակություն ունեն գիտելիքի հասարակության (knowledge-based society) ենթակառուցվածքների համեմատական վերլուծությունները:

ժամանակակից տեղեկատվական հասարակության կայացման գործընթացը բազմաստիճան է, որը ենթադրում է վերջինիս միջառարկայական ուսումնասիրությունների և դրանց վրա հիմնած հայեցակարգերի ու ազգային մոդելների իրականացում:

Ատենախոսության խնդիրն է ՀՀ-ում տեղեկատվական հասարակության կայացումը դիտարկել տեղեկատվական հասարակության հիմնական տեսությունների և մոդելների շրջանակներում, ինչպես նաև՝ տեղեկատվական հասարակության կայացման փուլերը տեղեկատվական անվտանգության, տեղեկատվական պատերազմների և ՀՀ ազգային անվտանգության համատեքստում: Ներկայացված ուսումնասիրությունն այս առումով ՀՀ-ում տեղեկատվական հասարակության կայացման համակարգային հիմնախնդիրը քաղաքագիտական տեսանկյունից դիտարկելու առաջին փորձն է:

Ատենախոսության նպատակն է համակողմանիորեն ուսումնասիրել տեղեկատվական հասարակության կայացումը ՀՀ-ում, ինչպես նաև մշակել տեղեկատվական հասարակության մոդել: Հետազոտության նպատակը կիրականացվի հետևյալ փոխկապակցված խնդիրների լուծման միջոցով՝ ա. Հստակեցնել տեղեկատվական հասարակության վերլուծության հիմնական ուղղություններն ավանդական հայեցակարգերի, ֆրանսիական սոցիոլոգիական դպրոցի հայեցակարգերի և գիտելիքի հասարակության տեսությունների համատեքստում:

բ. Բացահայտել տեղեկատվական հասարակության դիսկուրսի էվոլյուցիոն առանձնահատկությունները և զարգացման հնարավոր միտումները հայ հանրային կյանքում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Կատարված աշխատանքի գիտական նորույթը կարելի է արժևորել հետևյալ առումներով.

ա. Հենվելով տեղեկատվական հասարակության քաղաքագիտական վերլուծությունների վրա՝ առաջարկվել է «տեղեկատվական հասարակություն» հասկացության նոր սահմանում, որի համաձայն՝ «Տեղեկատվական հասարակությունը նույնական տեղեկատվական տարածության մեջ համագոյակցող մարդկանց, խմբերի և կազմակերպությունների ամբողջություն է, որոնք ունեն համանման հաղորդակցման հնարավորություններ, իսկ այդ տեղեկատվական տարածության սահմանները համադրելի են տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացվածության և հասանելիության սահմանների հետ»: Տեղեկատվական հասարակությունը քաղաքակրթության զարգացման հերթական փուլն է, որը բնորոշվում է հասարակական հարաբերություններում տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնական դերով:

բ. Աշխատանքում դիտարկված են տեղեկատվական հասարակության հիմնական տեսությունների տեղայնացման հնարավորությունները:

գ. Հիմնվելով քաղաքագիտական և սոցիալ-փիլիսոփայական մոտեցումների, իսկ ազգային մակարդակում Ազգային անվտանգության ռազմավարության վրա՝ առաջին անգամ համակողմանի վերլուծության է ենթարկված գիտական

հետազոտության չարժանացած այնպիսի խնդիր, ինչպիսին է ՀՀ-ում տեղեկատվական հասարակության կայացումն ազգային անվտանգության համակարգում:

դ. Դիտարկված է տեղեկատվական հասարակության կայացմանը նպաստող տեղեկատվական նոր տեխնոլոգիաների և մոդելների, տեղեկատվական պատերազմներում և տեղեկատվական անվտանգության խնդիրներում ՀՀ իշխանությունների և պետական մարմինների ընդունած ռազմավարական նշանակություն ունեցող փաստաթղթերի և ծրագրերի առավելություններն ու թերությունները:

ե. Դիտարկված է ՀՀ-ում տեղեկատվական հասարակության կայացման գործընթացը՝ դրանք բաժանելով փուլերի:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՆՔԸ: Տեղեկատվական հասարակարգի զարգացման ընթացքը կարելի է ներկայացնել հետարտադրողականության զարգացման միջոցով (Դ. Բելլ¹, Օ. Թոֆլեր², Ա. Տուրեն³ և այլք), որը ուշադրությունը կենտրոնացնում է ցանկացած հասարակարգի տնտեսական վերլուծության վրա ֆրանսիական կրիտիկական սոցիոլոգիայի ավանդույթների միջոցով, որոնք դիտարկում են տեղեկատվական հասարակությունից մինչև ժամանակակից գիտելիքի հասարակարգի (Knowledge – based Society) տեխնոլոգիական և սոցիալական բաղկացուցիչները՝ ստանալով սոցիալ-փիլիսոփայական և քաղաքագիտական ուղղվածություն՝ Մ. Կաստելի⁴, Ռ. Կաստի, Գ. Քիսինջերի, Ա. Լաբրիտի, Զ. Մարտինի, Է. Մասուդայի⁵, Դ. Մեդրոզի, Տ. Ստոուների⁶, Ֆ. Վեբստերի, Բ. Վինսթոնի, Գ. Շումանի ուսումնասիրություններում: Ռուսաստանում նման վերլուծական ծրագրեր չեն մշակվել, քանի որ տեղեկատվական հասարակության խնդիրներն ուսումնասիրության սկզբնական փուլում են: Դրանց թվին են դասվում Բ.Գ. Աֆանասևի⁷, Վ.Լ. Ինոզեմցևի⁸, Վ.Զ. Կոգանի⁹, Ի.Ս. Լադենկոյի¹⁰, Ա.Ի. Ռակիտովի¹¹, Ա.Դ. Ուրսուլի¹²,

Ս. Վերշինինի¹³, Տ. Վորոնինայի¹⁴ հետազոտությունները:

¹ Белл Д., Грядущее постиндустриальное общество: Опыт социального прогнозирования. Пер. с англ. М.: Academia, 1999.

² Тоффлер О. Третья волна. М., 1999.

³ Touren A., Social theory in postindustrial society. ... Minneapolis: University of Minnesota Press, 1988.

⁴ Кастель М. Информационная эпоха: экономика, общество и культура. М., 2000.

⁵ Masuda Y., Information Society as Postindustrial Society/ Wash/ World future Soc., 1983.

⁶ Стоунер Т., Информационное богатство: профиль постиндустриальной экономики // Новая технократическая волна на Западе. М., 1986.

⁷ Афанасьев В.Г. Социальная информация и управление обществом. - М.: Политиздат. - 1975.

⁸ Иноземцев В. Л. Социология Д.Белла и контуры современной постиндустриальной цивилизации. // Вопросы философии. - 2000. - №5

⁹ Коган В.З., Калачев Н.В. На рынке инфоуслуг // Проблемы инфовзаимодействия. - 1999. - №3. -

¹⁰ Ладенко И.С. Информатика и культура./ Отв.ред.И.С.Ладенко -Новосибирск. :Ан Сиб.отд-е. Инст-т философии и права. - 1994.

¹¹ Ракитов А.И. Философия компьютерной революции.-М.: Политическая литература, 1990.

¹² Урсул А.Д. Информатизация общества. - М.:1990.

¹³ Вершинин М.С. Информационное общество: понятие и признаки// Политическая коммуникация в информационном обществе. — СПб, 2001.

ՀՀ-ում տեղեկատվական հասարակության կայացումը լուսաբանելու համար օգտվել ենք քաղաքագիտական մի շարք հոդվածներից, Ազգային անվտանգության¹⁵ և տեղեկատվական անվտանգության ռազմավարական փաստաթղթերից¹⁶, ինչպես նաև համապատասխան համացանցային կայքերից:

Արժեքավոր ուսումնասիրությունների շարքում հիշատակենք դեռևս խորհրդային հեռավոր տասնամյակներից հայ հասարակությանը քաջ հայտնի կուսակցական գործիչ, քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), ՀՀ զինված ուժերի գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ղեկավար Հայկ Ս.Քոթանջյանի «Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում» ուսումնասիրությունը¹⁷: Այս ուսումնասիրությունը նպատակ ունի դառնալ հայ ժողովրդի և մերօրյա Հայաստանի (+ԼՂՀ) անվտանգության նախագիծ-ուղեցույցը:

Տեղեկատվական հասարակության անցման գործընթացը Հայաստանում և դրա դրսևորումներն առանձին ոլորտներում բավական մանրամասն ներկայացված են Գ. Պողոսյանի¹⁸, Տ. Թորոսյանի¹⁹ աշխատանքներում: Անցումային հասարակություններում քաղաքական համակարգի զարգացման հիմնախնդիրը քննարկվում է նաև Է. Հարությունյանի նույնանուն աշխատանքում²⁰:

Տեղեկատվական պատերազմի և տեղեկատվական անվտանգության որոշ խնդիրների լուսաբանման համար օգտվել ենք Գ. Պոչեպցովի, Ն. Վոլկոնսկու և Գ. Տեր-Հարությունյանի ուսումնասիրություններից:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ:

Տեղեկատվական հասարակության զարգացման և գոյության հիմքում ընկած է տեղեկատվությունը, որն օժտված է մարդու թե՛ հոգևոր, թե՛ նյութական աշխարհի հետ փոխազդեցության հատկությամբ: Վերջին հատկությունը հատկապես կարևոր է նոր հասարակության էությունը հասկանալու համար, քանի որ մի կողմից տեղեկատվությունը ձևավորում է մարդու կյանքի նյութական ոլորտը՝ հանդես գալով նորարարական տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի, հեռահաղորդակցական արձանագրությունների դերում, իսկ մյուս կողմից ծառայում է որպես միջանձնային հարաբերությունների հիմնական միջոց՝ անընդհատ առաջ գալով:

¹⁴ Воронина Т. П. Информационное общество: сущность, черты, проблемы. М., 1995.

¹⁵ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, 07.02.2007:

¹⁶ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ, 26 հունիսի 2009 թվականի ՆԿ-97-Ն:

¹⁷ Քոթանջյան Հ.Ս., Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում, Եր., 2008:

¹⁸ Погосян, Г. А., Армянское общество в трансформации. Ереван, «Лусабаз», 2003.

¹⁹ Թորոսյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Երևան, 2006:

²⁰ Հարությունյան, Է., Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Երևան, 2000:

ձևափոխվելով և վերակառուցվելով մի մարդուց մյուսին անցնելու ընթացքում: Տեղեկատվությունը միաժամանակ սահմանում է նաև մարդու սոցիալ-մշակութային կյանքը և նրա նյութական կեցությունը: Հենց դա է գալիք հասարակության նորությունը: Այն խորապես նկարագրվում է Դ. Բելլի տեսություններում, որոնք ստեղծել են այդ նոր՝ «տեղեկատվական հասարակություն» կոչվող ֆենոմենի հետագա զարգացման հայեցակարգային-տեսական հիմքը:

Մյուս ականավոր ներկայացուցիչը և տեղեկատվական հասարակության տեսության հիմնադիրներից մեկը՝ Օ. Թոֆֆլերը, տեղեկատվական հասարակության սահմանումը չի տալիս, սակայն «Երրորդ ալիք» գրքի մեջ խոսում է դրա բնույթի՝ սկզբունքայնորեն նոր լինելու մասին: Ըստ նրա՝ ձևավորվող քաղաքակրթությունը իրենից ներկայացնում է վարքի նոր օրենսգիրք, որը մեզ դուրս է բերում էներգիայի կենտրոնացման, դրամական միջոցների և իշխանության սահմաններից: Առաջացող այդ քաղաքակրթության մեջ շատ բաներ հակասում են ավանդական արդյունաբերական քաղաքակրթությանը: Օ. Թոֆֆլերը պատկերավոր կերպով սահմանում է տեղեկատվական հասարակությունը մի շարք նոր տարրերի թվարկման միջոցով, որոնք էապես նոր են այսօրվա կյանքի համար և արմատապես կփոխեն ժամանակակից կամ գալիք սերնդի կյանքը: «Երրորդ ալիքը» բերում է ճիշտ նոր կենսակերպ, որը հիմնված է դիվերսիֆիկացված, նորացվող էներգիայի աղբյուրների վրա:

Օ. Թոֆֆլերի «Երեք ալիքներ»-ում առաջ քաշած գաղափարները ընդհանուր առմամբ տեսական բնույթի են: Այդ պատճառով էլ որոշ կանխագուշակումներին վիճակված չէր իրականանալ. օրինակ՝ ուղեղից ուղեղ տվյալների ուղիղ փոխանցման հնարավորության և էլեկտրաքիմիական հաղորդակցության այլ տեսակների մասին միտքը: Սակայն տեղեկատվական հասարակության ուսումնասիրման ոլորտում հենց դրանից է ամեն ինչ սկսվել, և հեղինակը, որն աչքի է ընկնել որոշակի հեռատեսությամբ, արժանի է հարգանքի, քանի որ նրա կանխատեսումների մեծ մասն արդեն դարձել է մեր կյանքի անբաժանելի մասը:

XX դարի երկրորդ կեսին ամերիկացի տնտեսագետ Ֆ. Մահլուպի «Գիտելիքի արտադրությունը և կիրառումը ԱՄՆ-ում» աշխատության մեջ կիրառվել է «տեղեկատվական հասարակություն» տերմինը, որը փոխարինել է մինչ այդ կիրառվող «հետինդուստրիալ հասարակություն» տերմինին²¹: Ֆ. Մահլուպը առաջիններից էր, ով ուսումնասիրեց տնտեսության տեղեկատվական հատվածը ԱՄՆ-ի օրինակով: Ժամանակակից քաղաքագիտության մեջ և այլ սոցիալական գիտություններում «տեղեկատվական հասարակություն» տերմինը արագորեն զարգանում է որպես նոր սոցիալական կարգի հասկացություն, որն իր բնութագրերով էապես

²¹ Махлуп Ф., Производство и распространение знаний в США, пер. С англ. И. Дюмулена, М., Прогресс, 1966.

տարբերվում է նախորդից: Սկզբում դիտարկվում է «հետևապիտալիստական – հետինդուստրիալ հասարակություն» հասկացությունը, որի սահմաններում տնտեսության ճյուղերում սկսում է գերիշխել արտադրությունը և գիտելիքի տարածումը, և համապատասխանաբար առաջանում է նոր ճյուղ՝ տեղեկատվական տնտեսություն: Վերջինիս արագ զարգացումը պայմանավորում է պետության կողմից առևտրի վերահսկումը: Տեղեկատվության արտադրությունն ու հաղորդակցությունը դառնում են կենտրոնացված գործընթաց: Վերջին հաշվով տեղեկատվությունը սահմանվում է որպես նոր հետինդուստրիալ կարգի հիմնական ռեսուրս:

ԱՇԽԱՍԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ: Հետազոտության հիմքում ընկած են տեղեկատվական հասարակության՝ որպես յուրահատուկ սոցիոմշակութային և քաղաքագիտական ֆենոմենի մասին պատկերացումները, որոնք վերլուծվում են սոցիալ-քաղաքագիտական մոտեցման տեսանկյունից: Պատմական անցումային շրջաններում ուժեղանում է միջանկյալ սոցիալական քառսը, որից ելնելով դժվար է կանխատեսել տեղեկատվական հասարակության զարգացման ուղիները: Այդ պայմաններում կիրառվում է այլընտրանքների համադրման վրա հիմնված մեթոդը: Նման մեթոդը մի կողմից արդյունավետ է, քանի որ թույլ է տալիս հաշվի առնել ապագա սոցիալական զարգացման բազմաթիվ տարբեր հնարավորություններ, բայց մյուս կողմից, դրա կիրառումը հանգեցնում է սոցիալ-քաղաքական տեսությունների որոշակի քառասյունության, որը հիմնված է հասարակության զարգացման տեսական իմաստավորման մեջ առկա բազմակարծության վրա: Այս տեսանկյունից դիտարկված մեկնաբանությունների բազմազանությունը, որը ձևավորվել է տեղեկատվական հասարակությանը նվիրված ժամանակակից ուսումնասիրություններում, լիովին օրինաչափ է, քանի որ արտացոլում է XXI դարի տեղեկատվական հասարակության խճանկարային և մասնիկային բնույթը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և դրական կարծիքով հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնում և Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտում:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 166 էջ:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ցույց է տրված աշխատանքի գիտական նորույթը, տրվել է հիմնախնդրի սկզբնաղբյուրների ու առկա գիտական գրականության տեսությունը:

ԱՌԱՋԻՆ ԳՐՈՒՄԸ «Տեղեկատվական հասարակության էությունը» **բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցում քննության են ենթարկվել ա) տեղեկատվական հասարակություն հասկացությունը, բ) տեղեկատվական**

հասարակության կառուցվածքն ու գործառույթները <<ում, գ) տեղեկատվական հասարակության մոդելները, հատկապես հայկական մոդելը:

Տեղեկատվական հասարակությունն ունի բազմաթիվ ճյուղային հասկացություններ, որոնց մեջ կենտրոնական տեղ են զբաղեցնում տեղեկատվական տեխնոլոգիաները: Ըստ էության՝ դրանք տվյալների և գիտելիքների մշակման միջոցներ են, որոնք անցել են զարգացման մի շարք փուլեր՝ սկսած վաղ ժամանակներից մինչ մեր օրերը: Մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման փուլերն էին՝ բանավոր խոսքի, գրավոր խոսքի առաջացումը (մոտ Ք.ա. 2350թ.), հաշվարկի ի հայտ գալը (մոտ Ք.ա. 1350թ.), տպագրության գյուտը (1445թ.), հեռագրի առաջացումը (1816թ.), գրամեքենայի ստեղծումը (1874թ.), հեռախոսի (1876թ.), ռադիոյի (1895), հեռուստատեսության (1939թ.), համակարգչի (1945թ.), ինտեգրալ սխեմայի (1959թ.), անհատական համակարգչի (1975թ.) առաջացումը: Այն տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք զարգանում և կատարելագործվում են մեր օրերում, կոչվում են նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ²²:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման ոլորտում ներկայումս ձեռք բերված հաջողությունները նպաստում են մարդկանց կյանքում նոր տնտեսական, սոցիալական, մշակութային հարաբերությունների ձևավորմանը, որոնք բնութագրվում են մեկ միասնական հասկացությամբ՝ «գլոբալ տեղեկատվական հասարակություն»²³:

Տեղեկատվական հասարակությունը մեծ պահանջարկ ունի տեղեկատվական ծառայությունների և ապրանքների հանդեպ, որոնց փոխանցումը մարդկանց հնարավոր է իրականացնել էլեկտրոնային ցանցի միջոցով: Ամենակարևոր ռեսուրսը՝ ինտելեկտը, ցանցի պայմաններում դառնում է խիստ կենտրոնացած: Դա իր հերթին պարարտ հող է ստեղծում հեռավար աշխատանքային հարաբերություններ հաստատելու համար: Որոշ տվյալների համաձայն՝ 1997թ. հեռավար կարգով աշխատողների թիվը Եվրոպայում հասնում էր 2 միլիոնի, իսկ ԱՄՆ-ում՝ 11,1 միլիոնի²⁴:

Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումը զգալի փոփոխություններ է առաջացնում նաև հասարակության քաղաքական կյանքում: Դա արտահայտվում է երկու ձևով: Առաջին հերթին հնարավորինս շատ մարդիկ ստանում են հնարավորություն ծանոթանալ նոր ընդունվող օրենքների նախագծերի տեքստերին, որոնք դեռևս գտնվում են նախնական մշակման փուլում, ինչպես նաև հնարավոր է դառնում ծանոթանալ այդ հարցի շուրջ ստեղծված հսկայական վերլուծական տեղեկատվությանը: Երկրորդ՝ այստեղ սկզբունքային նորույթն այն է, որ տեսականորեն յուրաքանչյուր

²² Словарь информатики, Информационные технологии, www.i-u.ru.

²³ Чернов А.А., Становление глобального информационного общества: проблемы и перспективы, М.: Издательско-торговая корпорация, «Дашков и К°», 2003, с. 24.

²⁴ Status Report on Telework. - <http://www.eto.org.uk/twork/tw97eto/>

քաղաքացի հնարավորինս լայն լսարանի կարող է հայտնել իր կարծիքն այս կամ այն հարցի առնչությամբ:

Այսօր արդեն գրեթե բոլոր պետական և մասնավոր լրատվամիջոցներն ունեն իրենց «էջերը» Համացանցում, ինչը վերջին հաշվով նպաստում է ժողովրդավարական գործընթացների կատարելագործմանը, բնակչության քաղաքական ակտիվության բարձրացմանը, պետության և հասարակայնության միջև առավել արդյունավետ երկխոսության հաստատմանը²⁵:

Գլոբալ տեղեկատվական հասարակության ձևավորման և դրա ձևավորման ընթացքում հնարավոր բացասական հետևանքների կանխումը, դրան նպաստակառուցված ծրագրերի ուսումնասիրումը հարուստ ավանդույթներ ունի հետինդուստրիալիզմի հայեցակարգի շրջանակներում: Առաջին անգամ «տեղեկատվական հասարակություն» տերմինը սկսել է շրջանառվել 1960-ական թթ.:

Տեղեկատվական հասարակության էության պարզաբանումը կարևոր խնդիր է, որը սակայն չի կարող լուսաբանվել առանց տեղեկատվական հասարակության կոնցեպցիայի առաջացման պատմության վերլուծության:

«Տեղեկատվական հասարակություն» հասկացությունը ձևավորվել է 20-րդ դարի 60-70-ական թթ.: Տերմինի հեղինակն է Տոկիոյի տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր Յու. Հայաշին²⁶, սակայն այդ հասկացության ձևավորման գործում որոշակի դեր են ունեցել նաև Ճապոնական կառավարության համար աշխատող մի շարք կազմակերպություններ, այդ թվում՝ տնտեսական պլանավորման գործակալությունը, համակարգիչների մշակման և օգտագործման ինստիտուտը, արդյունաբերության կառուցվածքային հարցերով զբաղվող խորհուրդը:

Մարդկային հասարակության զարգացման ընթացքում տեղեկատվական հասարակության անցման գործընթացի իր ուրույն դիտարկումներն ու վերլուծություններն էլ կատարել Մ. Կաստելը: Նա «տեղեկատվական հասարակություն» (information society) հասկացության հետ մեկտեղ շրջանառության մեջ է դնում սեփական «տեղեկատվային հասարակություն» (informational society) հասկացությունը²⁷:

Տեղեկատվական հասարակության մասին հայեցակարգերում ընդգծվում է տեղեկատվության որոշիչ դերը հասարակության մեջ: Կաստելսի կարծիքով, տեղեկատվությունը և տեղեկատվության փոխանակումը մարդկության պատմության ողջ ընթացքում ուղեկցել են քաղաքակրթության զարգացմանը և կարևորվել են բոլոր հասարակություններում: Մինևույն ժամանակ, ի հայտ եկող «տեղեկատվային հասարակությունը» կառուցվում է այն կերպ, որ «տեղեկատվության մշակումը և փոխանցումը դառնում են արտադրության և իշխանության հիմնարար աղբյուրներ»: «Տեղեկատվային

²⁵ Чернов А.А., указ. соч., с. 28.

²⁶ Аблесв Р.Ф., Философия информационной цивилизации. / Редакторы: Е.С. Иващкина, В.Г. Деткова. — М.: ВЛАДОС, 1994, с. 96-97.

²⁷ Кастельс М., Информационная эпоха: экономика, общество и культура, с. 14.

հասարակության» առանցքային հատկանիշներից մեկը նրա հիմքային կառուցվածքի ցանցային տրամաբանությունն է: Բացի այդ՝ «տեղեկատվային հասարակությունը» զարգանում է գլոբալիզացիայի արագացող և հակասական գործընթացների համապատկերի վրա: Ներկայումս սոցիալական ցանցերի առկայությունը և դրանց աճող ազդեցությունն ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում ընթացող մի շարք քաղաքական, տնտեսական և սոցիալական գործընթացների վրա, վկայում է Կաստելսի տեսության իրավացիության մասին:

«Հ-ում տեղեկատվական հասարակության կառուցվածքի վերլուծությունն առավել դժվար է՝ համեմատած նախորդ տիպերի հասարակությունների կառուցվածքի հետ, քանի որ այս հասարակության հիմնարար օղակը համակարգչային հաղորդակցման միջոցներն են, որոնք ինքնուրույն արտադրվող միավորներ չեն, այլ յուրահատուկ արտադրական ճյուղի գործունեության հետևանք են: Այս իմաստով, տեղեկատվական հասարակությունը պետք է մատնացույց անի այն հատուկ բնութագրիչ գծերը, որոնք թույլ կտան տեսնել այդ հասարակության կառուցվածքը²⁸»:

Վերլուծելով տեղեկատվական հասարակության կառուցվածքային առանձնահատկությունները «Հ-ում» նշենք, որ պայմանականորեն այն կազմված է չորս օղակներից: Դրանք են՝

ա. պետական իշխանության մարմինները, որոնցում գլխավոր դերը պատկանում է կառավարությանը,

բ. տեղեկատվական հասարակության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունները,

գ. զանգվածային լրատվության միջոցները՝ ի դեմս հեռուստատեսության, ռադիոյի, մամուլի, այդ ոլորտներում զբաղված քաղաքացիների և այլն,

դ. Չորրորդ օղակը կազմված է քաղաքացիների այն հատվածից, որը այս կամ այն չափով իր կենսագործունեության մեջ կիրառում է տեղեկություն, օգտվում է ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներից, ստանում է կրթություն /այս խմբի մեջ պայմանականորեն կարելի է ներառել դպրոցականներին, ուսանողներին, դպրոցների, բուհերի, գիտահետազոտական հիմնարկների աշխատակիցներին և այլն/:

Տեղեկատվական հասարակությունը կառուցվածքային իմաստով տարբերվում է նրանով, որ իշխանության օրինականացումը հիմնված է հենց մշակութային արժեքների վրա և ոչ թե հարկադրանքի: Այսինքն հասարակությունը յուրացնում է հասարակական կարծիքին ենթարկվելու նորմերի ամբողջությունը: Հասարակական կարգը կայուն վիճակում քիչ, թե շատ երկարատև պահպանելու անկյունաքարը դառնում է բարոյականության, կարգուկանոնի առկայությունը: Ոչ մի ընտրանի չի կարող պահպանել կառավարման լծակները, եթե չի համապատասխանում սահմանված

²⁸ Луккина Н.П., Информационное общество: состояние и перспективы социально- философского исследования, www.huminf.tsu.ru/e-jurnal/.../1/lukina.htm

մշակութային նորմերին կամ չի առաջարկում իր նորմերը, որոնք կընդունվեն մեծամասնության կողմից²⁹:

Տեղեկատվական հասարակության մոդելների վերլուծությունը թույլ է տալիս հասկանալ հայկական մոդելի՝ դրանք հետ ունեցած նմանություններն ու տարբերությունները:

Տեղեկատվական ասպարեզում առաջնային դիրք զբաղեցնող երկրների հասարակական կառուցվածքի ուսումնասիրությունը Մ. Կաստելին և Պ. Խիմենենին հնարավորություն են տվել առանձնացնել տեղեկատվական հասարակության հետևյալ մոդելները:

ա. «Սիլիկոնյան հարթավայր», որը շուկայական մեխանիզմերով կարգավորվող բաց տեղեկատվական հասարակություն է:

բ. Սինգապուրյան մոդել, որն ավտորիտար տեղեկատվական հասարակություն է:

գ. Ֆիննական մոդել՝ բաց, բարգավաճ տեղեկատվական հասարակություն³⁰: Առանձին-առանձին կանգ չառնելով նրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունների վրա՝ մանրամասնենք միայն տեղեկատվական հասարակության առավել հայտնի մոդելների՝ ֆիննականի և Ճապոնականի բովանդակությունը:

Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում տեղեկատվական հասարակության ֆիննական և Ճապոնական մոդելները:

Բացի տեղեկատվական հասարակության նկարագրված մոդելներից՝ առկա են նաև այլ՝ ազգային մոդելներ: Այսօր տեղեկատվական հասարակության (ՏՀ) կառուցման ոլորտում պետության քաղաքականությունը որոշվում է գլոբալ մակարդակով: 1995 թվականին Բրյուսելում Մեծ Յոթնյակի հանդիպմանը մշակվել են հետևյալ սկզբունքները՝

ա. համագործակցություն հեռահաղորդակցության զարգացման ոլորտում՝ դինամիկ մրցակցություն ստեղծելու համար,

բ. տեղեկատվական ենթահամակարգի զարգացման համար մասնավոր ներդրումների խրախուսում,

գ. մասնակցություն համակարգչային միջոցների ներմուծման ոլորտի համար ձկուն օրենսդրության մշակմանը,

դ. դեպի տեղեկատվական ցանցերը ազատ մուտքի ապահովում,

ե. համագործակցություն հասարակությանը արդյունավետ և հասանելի տեղեկատվական ծառայությունների մատուցման գործում,

զ. մասնակցություն տեղեկատվական հանրության գլոբալ կառուցման

միջազգային խնդիրների քննարկմանը³¹:

Ընդհանուր առմամբ տեղեկատվական հասարակության կառուցման եվրոպական մոդելը հակված է հասարակության տեղեկացված լինելու ավելի

գործնական տարբերակին, այլ ոչ թե զվարճանքների ոլորտի զարգացմանը, ինչպես դա արվում է ԱՄՆ-ում: Սակայն այստեղ հարկավոր է նշել այն փաստը, որ Եվրոպայում տնային տնտեսությունների տեղեկատվայնացման նախաձեռնությունը այդքան մեծ թափ չունի, ինչպես ԱՄՆ-ում:

Տեղեկատվական հասարակության կառուցման մյուս հայտնի մոդելը անգլո-ամերիկյանն է: Այս ուղին հայտնի է սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր մոդելով, երբ պետության գործառույթները հասնում են նվազագույնի, իսկ անհատ ձեռներեցների գործունեության շրջանակները՝ առավելագույնի: Զարգացման տարբեր դրսևորումներում մասնավոր հատվածի դերի մեծացումն ամերիկյան ուղին է, այնինչ մայրցամաքային Եվրոպայում միշտ մեծ է եղել պետության դերը³²:

Ասիական երկրներում տեղեկատվական հասարակության կառուցման այս մոդելի հաջողությունը հիմնվում է արևմտյան նորմերի հերքման, ինչպես նաև սոցիալական և արդյունաբերական զարգացման ուղղված նոր մոտեցումների մշակման ձգտման մեջ: Սրա հիմքում ընկած են պետության և շուկայի համագործակցությունը, մշակութային արժեքների ու սոցիալական ձևափոխությունների միջև կապ հաստատելու փորձը:

Ասիական մոդելն ունի 3 տեսակ՝ ճապոնական, «ասիական վագրեր» և Հնդկական: Ճապոնական մոդելի մանրամասն լուսաբանումն արդեն կատարված է, հետևաբար՝ վերլուծենք ասիական մոդելի մյուս երկու՝ «ասիական վագրերի» և հնդկականի առանձնահատկությունները:

Տեղեկատվական հասարակության կառուցման հայկական մոդելի կարևոր բաղկացուցիչներն են էլեկտրոնային կառավարման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության հետ կապված խնդիրները, որոնք կապվում են հայտնի Մալթի ծրագրի իրականացման հետ: Ներկայումս ՀՀ-ում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն է իրականացվում յոթ պետական մարմիններում՝ սկսած կառավարության աշխատակազմից, ֆինանսների, էկոնոմիկայի, տարածքային կառավարման, սփյուռքի, արտաքին գործերի նախարարությունների, պետեկամուտների կոմիտեի և Կոտայքի մարզպետարանի բոլոր փաստաթղթերը շրջանառում են էլեկտրոնային եղանակով: Տեղեկատվական հասարակության հայկական մոդելի կառուցվածքում իրենց ուրույն տեղն ունեն տեղեկատվական հասարակության հետ արդեն անխզելիորեն կապված այնպիսի ենթահամակարգեր, ինչպիսիք են կառավարությանը էլեկտրոնային նամակ գրելը, այդ նամակի ընթացքին հետևելը, լիցենզիաների հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգի գոյությունը, վարչապետի որոշումներին հետևելը, էլեկտրոնային վիզայի (e-visa), էլեկտրոնային ստորագրության առկայությունը և այլն:

²⁹ Берн Э., Лидер и группа, Екатеринбург, 2001, с. 6-7.

³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 26:

³¹ Вершинская О.Н., Существующие модели построения информационного общества, www.emag.iis.ru/.../1f41ce7df933b2dfc32568c50027cde3

³² Вершинская О.Н., Существующие модели построения информационного общества, www.emag.iis.ru/.../1f41ce7df933b2dfc32568c50027cde3

Կատարված վերլուծությունը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել տեղեկատվական հասարակության հայկական մոդելի առանձնահատկությունների մասին, որը սակայն իր կայացման վաղ փուլում է, ուստի հետագա կատարելագործումն անխուսափելի է:

ԵՐԿՐՈՐԴ ՂՈՒԽԸ «Տեղեկատվական հասարակության առանձնահատկությունները ՀՀ-ում», բաղկացած է երեք ենթազուխտերից՝ ա) տեղեկատվական հասարակության կայացման իրավական հիմքերը ՀՀ-ում, բ) տեղեկատվական հասարակության կայացման հիմնական փուլերը ՀՀ-ում, գ) տեղեկատվական պատերազմի և տեղեկատվական անվտանգության փոխհարաբերությունները:

Առաջին ենթազուխտում համակարգված ձևով ներկայացված է տեղեկատվական հասարակության կայացման առանձնահատկությունները, իրավական հիմքերի լուսաբանումը:

Տեղեկատվական հասարակության կայացման իրավական հիմքերը ՀՀ-ում դրվել են հանրապետության հռչակումից ի վեր: Տեղեկատվության, խոսքի և մամուլի ազատությունը ՀՀ-ում սահմանված է Սահմանադրությամբ: Ազատական տնտեսակարգի կառուցման, քաղաքացիական հասարակության ձևավորման և ժողովրդավարության հիմքերի ամրացման փուլում գտնվող Հայաստանի Հանրապետության համար էական են տեղեկատվական գործընթացները, մասնավորապես տեղեկատվական հասարակության իրավական հիմքերի ստեղծումը, որոնք իրենց հերթին նպաստում են կառավարման մեխանիզմների կատարելագործմանը³³: Այս համատեքստում կարևոր նշանակություն ունեն «Ջանգվածային լրատվության մասին»³⁴, «Տեղեկատվության ազատության մասին»³⁵, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին»³⁶ և ՀՀ այլ օրենքների ու իրավական ակտերի ընդունումն ու վավերացումը:

ՀՀ-ում տեղեկատվական հասարակության կերտման ճանապարհին առանձնակի կարևորություն է ստանում դրա իրավական հիմքերի վերլուծության խնդիրը: Իրավական հիմքեր ասելով՝ հասկանում ենք տեղեկատվական հասարակության կայացման ճանապարհին նրան առնչվող բոլոր իրավական փաստաթղթերի, օրենքների, օրենսդրական ակտերի, պայմանագրերի, համապատասխան ազգային և միջազգային ծրագրերի ամբողջությունը, որոնք միտված են դրված խնդրի լուծմանը: Տեղեկատվական հասարակության կայացման ճանապարհին ՀՀ-ում ստեղծվել են մի շարք ծրագրեր, հայեցակարգեր, ընդունվել են համապատասխան օրենքներ:

³³ Դավթյան Մ., Քոչարյան Լ., Մեկնաբանություններ Հայաստանում տեղեկատվության մատչելիության վերաբերյալ, «Տեղեկատվության ազատությունը և կառավարման թափանցիկությունը», Եր., 2001, էջ 32:

³⁴ Տես ՀՀ օրենքը Ջանգվածային լրատվության մասին, 13.12.2003թ.:

³⁵ Տես ՀՀ օրենքը Տեղեկատվության ազատության մասին, 23.09.2003թ.:

³⁶ Տես ՀՀ օրենքը Հեռուստատեսության և ռադիոյի մասին, 09.10.2000թ.:

Կարելի է հիշատակել «ՀՀ պետական տեղեկատվական միասնական համակարգի ստեղծման և ներդրման» ծրագիրը (1999)³⁷, որն ավելի ուշ, երբ Հայաստանն արդեն Եվրախորհրդի անդամ էր, վերանվանվեց «Էլեկտրոնային Հայաստան» (դառնալով Եվրամիության eEurope նախագծի (1999) արձագանքներից մեկը):

Մեկ այլ օրինակ է տեղեկատվական հասարակության գլոբալ նախաձեռնության ծրագիրը (Ժնև, 2003), որը նույնպես բաղկացած է երկու մասից՝ «Սկզբունքների հռչակագիր» և «Գործողությունների պլան»:
Հայաստանը ևս մասնակցել է Ժնևի գագաթաժողովին և պաշտոնապես միացել նախաձեռնությանը՝ խնդիրալոց ստանձնելով որոշակի պարտավորություններ, որոնց մասին ներկա հայեցակարգի հեղինակները գիտակցաբար լուծում են:

Տեղեկատվական հասարակության կերտման ճանապարհին իրավական փաստաթղթերի պակաս գրեթե չի զգացվել:

Դեռևս 2000 թ. դեկտեմբերի 28-ին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերությունը ճանաչվեց ՀՀ տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը³⁸: Այնուհետև՝ 2001 թ. ՀՀ կառավարության հավանության արժանացավ ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման հայեցակարգը, իսկ 2008 թ-ին Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգը ՀՀ Նախագահի 2001 թվականի հուլիսի 20-ի ՆՀ-896 հրամանագրով ստեղծվեց Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդը, որի նախագահը ՀՀ վարչապետն է: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդը (ՏՏՁԼԽ), հանդիսանալով կապող օղակ կառավարության և ՏՏ-ի բիզնեսի, կրթական հաստատությունների, ՏՏ-ի հասարակական կազմակերպությունների, դոնոր և միջազգային կազմակերպությունների միջև, կազմակերպում և անցկացնում է տեղեկատվական հասարակության կայացմանը և ՏՏ-ի արդյունաբերության խնդիրների լուծմանը նպաստող քննարկումներ:

2001 թվականին հաստատվեց «ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման հայեցակարգը»³⁹, որը հետևեց տվյալ ոլորտը Հայաստանի տնտեսության գերակա ճյուղ հայտարարելու մասին կառավարության որոշմանը:

Տեղեկատվական հասարակության իրավական հիմքերի վերլուծությունը թերի կլինի, եթե չանդրադառնանք միջազգային այնպիսի կարևոր փաստաթղթերի, ինչպիսիք են «Թունիսյան հանձնառությունները» և

³⁷ Տես ՀՀ պետական տեղեկատվական միասնական համակարգի ստեղծման և ներդրման ծրագիր, հաստատված է ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 16-ի N 152 որոշմամբ:

³⁸ ՏՏ ոլորտը Հայաստանում, www.mineconomy.am/am/19/

³⁹ Տես ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման հայեցակարգը, www.mineconomy.am/upload/file/tnt-19-21-01.pdf

«Տեղեկատվական հասարակության թունիսյան ծրագիրը»⁴⁰: Հայտնի է, որ տեղեկատվական հասարակության կառուցմանն առնչվող այդ փաստաթղթերն ընդունվել են ժնկի գազաթափողվին հաջորդած Թունիսի գազաթափողում (2005 թ. նոյեմբերի 16-18-ը): Պետք է ընդգծել այն, որ թունիսյան ծրագրում մասնավորապես խոսք է գնում տեղեկատվական հասարակության կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների, ինչպես նաև ինտերնետի օգտագործման կառավարման, ընդունված որոշումների և հետագա քայլերի իրագործման մասին: Ծրագիրն ամփոփվում է հավելվածով:

Թունիսյան այս փաստաթուղթն առնչվում է ՀՀ-ին այնքանով, որքանով որ ՀՀ կառավարության պատվիրակությունը՝ ի դեմս վարչապետ Ա. Մարգարյանի, մասնակցում էր այդ գազաթափողվին:

Հայաստանի մասնակցությունն այդ գազաթափողվին, սակայն, հիմք չհանդիսացավ հետագայում այնտեղ ընդունված ծրագրային դրույթները մեր երկրում կիրառելու համար: Ըստ էության՝ այստեղ է, որ բախվում են հակասության, քանի որ եթե թունիսյան ծրագրի դրույթները ՀՀ-ում մինչ օրս իրագործված չեն, ուստի այդ փաստաթուղթը մնում է սոսկ որպես փաստաթուղթ՝ ոչնչով չնպաստելով ՀՀ-ում տեղեկատվական հասարակության կայացմանը:

Ամփոփելով նշենք, որ տեղեկատվական հասարակության իրավական հիմքերի խնդիրներն այսքանով չեն սահմանափակվում, մասնավորապես դրանք սերտ առնչություն ունեն նաև տեղեկատվական հասարակության կայացման փուլերի և տեղեկատվական անվտանգության հարցերի հետ: Տեղեկատվական պատերազմների, տեղեկատվական անվտանգության հետ կապված խնդիրների լուսաբանման ընթացքում ևս չենք կարող զերծ մնալ ոլորտին վերաբերող իրավական փաստաթղթերի լուսաբանումից, որոնց շարքին են դասվում ազգային անվտանգության ռազմավարությունը, պաշտպանության նախարարության կողմից ընդունած մի շարք իրավական փաստաթղթեր և այլն:

Երկրորդ ենթագլխում վերլուծել ենք ՀՀ-ում տեղեկատվական հասարակության կայացման հիմնական փուլերը: Վերջին տարիներին Հայաստանում հաճախ է խոսվում տեղեկատվական տեխնոլոգիաների (SS), մասնավորապես այս ասպարեզում Հայաստանի կարողությունների ու հավակնությունների մասին: Հայտնի է, որ Խորհրդային Հայաստանը եղել է համակարգչային տեխնոլոգիաների զարգացման խորհրդային կենտրոններից մեկը, և որ Խորհրդային Միության փլուզումից հետո իրադրությունը կտրուկ փոխվել է: Նորաստեղծ հանրապետությունը բազմաթիվ խնդիրների կողքին պետք է կարողանար հաղթահարել անցումային հասարա-

կություններին բնորոշ մի շարք դժվարություններ, այդ թվում նաև տեղեկատվական հասարակության կայացման հետ առնչվող խնդիրները: Խոսելով ՀՀ-ում տեղեկատվական հասարակության կայացման փուլերի մասին՝ նշենք, որ մինչ օրս հստակեցված չեն այն ժամանակագրական շրջանակները, որոնցում կարելի կլիներ տեղավորել այդպիսի հասարակության ձևավորման անցած ուղին, նրա փուլերը: Այդուհանդերձ՝ արդեն 1990-ականների սկզբին Երևանում ստեղծվեցին ծրագրային ապահովման (ՄԱ) առաջին մասնավոր հիմնարկները, իսկ 2000 թ. Երկրի կառավարությունն արդեն պատրաստակամություն դրսևորեց՝ հաշվի նստելու ձևավորված ոլորտի հետ:

Հայաստանյան հասարակական-քաղաքական գործիչների բառապաշարում և տեղեկատվամիջոցներում վերջերս հաճախ է օգտագործվում «տեղեկատվական հասարակություն» տերմինը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ մեր հանրության մեջ զարգացման ներկա փուլում ձևավորվում է դրական վերաբերմունք տեղեկատվության և դրա մասը կազմող գիտելիքի նկատմամբ:

Տեղեկատվական հասարակությանը բնորոշ այս չափորոշիչները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել, թե ինչպիսի դժվարին և երկար ճանապարհ է ընկած Հայաստանի առջև դեպի ապագա տեղեկատվական հասարակություն, դեպի հետինդուստրիալ զարգացման այն անհրաժեշտ աստիճանը, որին անխուսափելիորեն և անհրաժեշտորեն հարկավոր է հասնել:

ՀՀ-ում տեղեկատվական հասարակության կայացման փուլերը պայմանականորեն կարելի է սահմանել հետևյալ ձևով.

ա. հասարակության կայացման նախադրյալներ և սկզբնական շրջան, որին բնորոշ էին համապատասխան իրավական փաստաթղթերի ընդունումը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում (սկսած 1995 թ.), բ. հասարակության կայացման հիմնական փուլ, որը բնութագրվում է ՏՀՏ տարածման և օգտագործման մակարդակով, ընդ որում՝ դրա կիրառումը կրթության բնագավառում (1995 թ. հետո ընկած ժամանակաշրջան),

գ. հասարակության կայացման եզրափակիչ փուլ (21-րդ դարի առաջին տասնամյակ), որը կարելի է բնորոշել ինտերնետի տարածման և օգտագործման հասանելիությամբ, ինչի արդյունքում հասարակական կյանքի շատ ոլորտներ թվայնացվում են և հասանելի դառնում հասարակության տարբեր խմբերին՝ անկախ ժամանակից ու տարածությունից: Այս փուլին կարծում ենք բնորոշ է կիբեռնալոյթի ժամանակը:

Պատմական զարգացումների բերումով՝ Հայաստանը 1990-ական թթ. հայտնվել էր այնպիսի վիճակում, երբ պահանջվում էր կողմնորոշվել ԱՊՀ և Եվրամիության (Եվրախորհրդի)՝ որպես տեղեկատվական հասարակության և ՏՀՏ-ին վերաբերող նախաձեռնությունների և համագործակցության ծրագրերի իրականացման երկու անհամատեղելի ասպարեզների միջև: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման 1970-ականներին ժայր առած և 1990-ականների սկզբին նոր փուլ մտած հեղափոխական ընթացքը

⁴⁰ Тунисская программа для информационного общества, www.itu.int/wsis/docs2/tunis/off/6rev1-ru.doc

խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո նշանավորվեց ՏՀ կառուցման խոշոր ծրագրերի առաջադրմամբ: Ամերիկյան «Ազգային տեղեկատվական ենթակառուց» ծրագիրը (1993) ավելի շատ հայտնի է փոխնախագահ Ալբերտ Գորին վերագրվող «Տեղեկատվական գերմայրուղի» անունով⁴¹:

Եվրամիության ծրագիրը՝ «Եվրոպայի ուղին դեպի տեղեկատվական հասարակություն. գործողության պլան», ընդունվեց հաջորդ տարի՝ 1994 թ.: Այն ամերիկյան նախաձեռնության անմիջական հակազդեցությունն էր: Նախագիծն ուներ միավորիչ հավակնություն ձևավորելու համաեվրոպական միասնական հասարակություն:

ԱՊՀ անդամ երկրների տեղեկատվական տարածքի ձևավորման հայեցակարգի հաստատումը (1995թ.) կարելի է դիտել որպես այդ իրադարձությունների արձագանք. այստեղ Եվրամիության փաստաթղթերը նշված են օգտագործված նյութերի թվում:

ՀՀ-ում տեղեկատվական հասարակության կայացման սկզբնական փուլ կարելի է համարել 1995 թ., որն Անկախ Պետությունների Համագործակցության անդամ երկրների միասնական տեղեկատվական տարածքի ձևավորման կամ տեղեկատվայնացման հայեցակարգի առաջադրման տարին էր, երբ ստեղծվեց նաև ԱՊՀ անդամ երկրների ներկայացուցիչների Համակարգող խորհուրդ, մշակվեց գործողությունների հեռանկարային պլանի առաջին տարբերակը⁴²: Իսկ 1997թ. Հայաստանն առաջին անգամ հրավիրվեց Եվրախորհրդի շրջանակում որպես դիտորդ մասնակցելու (մեդիայի գծով պատասխանատու) Եվրոպական նախարարների հինգերորդ՝ «Տեղեկատվական հասարակություն. մարտահրավեր Եվրոպայի համար» խորհրդաժողովին՝ փաստորեն հնարավորություն ստանալով ծանոթանալու և մասնակցելու Տեղեկատվական հասարակության (ՏՀ) Եվրոպական ծրագրերին:

Տեղեկատվական հասարակության կայացման այս փուլին բնորոշ են մի շարք խնդիրներ, մասնավորապես.

ա. ազգային տեղեկատվական ռեսուրսները (տվյալների բազան և բանկը, արխիվների բոլոր տիպերը, գրադարանները և թանգարանային արժեքները, և դրանցից ազատորեն օգտվելու հնարավորությունը),

բ. տեղեկատվական-հաղորդակցական ենթակառուցվածքները (տարածականորեն տեղաբաշխված պետական և կորպորատիվ համակարգչային ու հեռահաղորդակցական ցանցերը և հատուկ նշանակության ու համընդհանուր օգտագործման համակարգերը, տվյալների փոխանակման ցանցերը, տեղեկատվական տեղաշարժերը դեկավարելու միջոցները, ինչպես նաև կազմակերպչական կառուցվածքները և իրավական մեխանիզմները, որոնք ապահովում են ենթակառուցվածքի արդյունավետ գործառնությունը),

⁴¹ Բայադյան Հ., ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների տարածումը և զարգացումը Հայաստանում, Եր., 2005, էջ 18:

⁴² Տես նույն տեղում, էջ 3:

գ. տեղեկատվական, համակարգչային և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները (հիմնարար, կիրառական և ապահովող տեխնոլոգիաները և դրանք կյանքի կոչելու միջոցները և այլն),

դ. տեղեկատվական ապրանքների և ծառայությունների արտադրությունն ու սպառումը (իշխանության և կառավարման մարմինների, տնտեսական գործունեության սուբյեկտների և ընդհանրապես բնակչության կողմից),

ե. տեղեկատվայնացման հեռահաղորդակցության և կապի գիտա-արտադրական ներուժը (հիմնարար և կիրառական գիտության կազմակերպություններ ու ձեռնարկություններ ինֆորմատիկայի, հեռահաղորդակցության և կապի ոլորտներում),

զ. տեղեկատվական տեխնոլոգիաների շուկան (հեռահաղորդակցության, կապի, տեղեկատվական ապրանքների և ծառայությունների միջոցները),

է. էլեկտրոնային ԶԼՄ-ների զարգացման ու գործառնության համար անհրաժեշտ տեխնոլոգիաները⁴³:

ՀՀ-ում տեղեկատվական հասարակության կայացման հիմնական կամ երկրորդ փուլը կապված էր միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների Հայաստանում իրականացրած ծրագրերի հետ, որոնք վերաբերում են հասարակության մեջ ՏՀՏ տարածմանը և օգտագործմանը: Առաջին հերթին հիշատակենք այն ծրագրերը, որոնք զուտ հասարակական բնույթ ունեն: Այստեղ ամենականառուն ՄԱԿ զարգացման ծրագրի «Ազատ ցանց» նախաձեռնությունն է և IREX-ի (Միջազգային հետազոտությունների ու փոխանակման խորհուրդ) կողմից 1998 թ. ի վեր ձևավորված ինտերնետի հանրային մատչելիության կենտրոնների ցանցի ստեղծումը⁴⁴:

Տեղեկատվական հասարակության կայացման եզրափակիչ փուլը (21-րդ դարի առաջին տասնամյակ), որը կարելի է բնորոշել Ինտերնետի տարածման և օգտագործման հասանելիությամբ, կարելի է համարել 21-րդ դարի առաջին տասնամյակը: Արդեն 1999-2000թթ. Երևանում ի հայտ եկան առաջին ինտերնետային սրճարաններն ու ակումբները, որոնք այսօր քաղաքային միջավայրի բնութագրական գծերից են դարձել: Սա ինտերնետի տարածման և օգտագործման նոր փուլ էր նշանավորում՝ հարուցելով նոր խնդիրներ ու դժվարություններ: Չլուծված խնդիրների թվում պետք է հիշատակել հատկապես այս ոլորտին վերաբերող օրենքների կամ դրանց իրականացման մեխանիզմների բացակայությունը⁴⁵:

Պետք է նշել, որ Հայաստանում «տեղեկատվական հասարակության» ձևավորման ծգտումը շատ հրատապ էր: Ներկայումս հետարդյունաբերական ինտենսիվ զարգացման համար Հայաստանում առկա են որոշակի պայմաններ, դրանք են.

⁴³ Պողոսյան Հ., Հայաստանն ինֆորմացիոն հասարակության շեմին, Անցումային հասարակության սոցիալական փոխակերպումներ, Հոդվածների ժողովածու, էջ 98:

⁴⁴ Internet Access and Training Program (IATP), www.irex.org/project/internet-access-and-training-program-iatp

⁴⁵ Բայադյան Հ., ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների տարածումը և զարգացումը Հայաստանում, էջ 66:

ա. արագ տեմպերով կատարելագործվում է Հայաստանի տեղեկատվական ենթակառուցվածքը, իչպես նաև զարգանում է կապի ծառայությունների շուկան,

բ. հասարակության տնտեսական, քաղաքական, սոցիալական ու հոգևոր կյանքում ակտիվ օգտագործվում են տեղեկատվական-հաղորդակցման տեխնոլոգիաները,

գ. հասարակության մեջ սկսում է ձևավորվել հետարդյունաբերական զարգացման արդյունավետության անհրաժեշտության ըմբռնումը,

դ. ընդունվել և իրագործվում են մի շարք հայեցակարգեր՝ մարդու, հասարակության և պետության գործունեության կարևոր բնագավառներում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ:

Տեղեկատվական հասարակություն կառուցելու ռազմավարություն ընտրելիս Հայաստանը պետք է ձշտի մի շարք գլոբալ խնդիրներ՝ երկրի տեղը համաշխարհային, քաղաքակրթական, աշխարհաքաղաքական ու պատմա-մշակութային գործընթացներում, նրա տնտեսական, աշխարհագրական և տարածաշրջանային յուրահատուկ դիրքը, հաշվի առնի նաև տեղեկատվական պատերազմների և տեղեկատվական անվտանգության հետ առնչվող խնդիրները և այլն:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլուխը նվիրված է տեղեկատվական պատերազմի և տեղեկատվական անվտանգության խնդիրների լուսաբանմանը, ընդ որում՝ դա կատարել ենք ազգային անվտանգության համատեքստում:

«Տեղեկատվական պատերազմ» տերմինը ներկայումս օգտագործվում է երկու նշանակությամբ:

Առաջին դեպքում այն ունի հետևյալ իմաստը՝ հակառակորդ երկրի քաղաքացիական բնակչության և զինված ուժերում որոշակի ապատեղեկատվության տարածումը: Տեղեկատվական պատերազմ հասկացության հետ միաժամանակ կիրառվում է «հոգեբանական պատերազմ» տերմինը⁴⁶:

Երկրորդ դեպքում տեղեկատվական պատերազմ ասելով հասկանում ենք նպատակաուղղված գործողություններ, որոնք ձեռք են առնվում մի երկրի կողմից տեղեկատվական գերակայության ապահովման համար՝ ընդ որում ոչնչացնելով հակառակորդի տեղեկատվության պաշարները և պահպանելով սեփականը:

Հայաստանի Հանրապետության դեմ տեղեկատվական պատերազմ մղող 2 հիմնական երկրները Ադրբեջանն ու Թուրքիան են:

Ինչպես հայտնի է, Հայաստանն ու Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի համար մղում են ոչ միայն քաղաքական պատերազմ, այլև տեղեկատվական պատերազմ, որը թեժանում է օրեցօր: Սա պայմանավորված է ինչպես դրա վարման մեթոդների բազմազանությամբ, այնպես էլ հակամարտության երկու կողմերի՝ պատերազմի այդ բաղադրիչի կարևորության ընկալմամբ:

⁴⁶ Почепцов Г. Г., Информационные войны. М.: «Рефл-бук», К.: «Ваклер», 2000, с. 42.

Գաղտնիք չէ, որ ադրբեջանական կողմն արդեն բավական երկար ժամանակ փոխում է ինչպես Հայաստանի, այնպես էլ ընդհանրապես հայության դեմ ուղղված տեղեկատվական պատերազմի վարման մեթոդները: Մասնավորապես ընթանում է տեղեկատվական դաշտի համակարգում, տեղեկատվական հակամարտության կենտրոնների գործունեության ղեկավարման և համակարգման գործում պետության դերի ուժեղացում: Հարկ է նշել, որ արժևորվում է նաև համացանցի դերը, քանի որ այն ամենամեծ ծավալի տեղեկություններ տարածելու հնարավորություն է տալիս:

Ինչպես ցանկացած պատերազմ, տեղեկատվական պատերազմներն էլ վարվում են 3 դաշտում՝ սեփական, չեզոք և հակառակորդի: Նրանց համար հակառակորդի՝ Հայաստանի դաշտում պատերազմ մղելը շատ դժվար է, քանի որ այստեղից գնացող տեղեկատվությունը Ադրբեջանում սահմանափակվում է: Նրանք մեր ուղարկած պատասխանները հաճախ չեն հրապարակում: Բնականաբար օգտագործվում է չեզոք տեղեկատվական դաշտը՝ որջ աշխարհով մեկ տարածելով Հայաստանի մասին ապատեղեկատվություն:

Ադրբեջանն այսօր ավելացնում է իր ներկայությունը համացանցում՝ ի հաշիվ անընդհատ ավելացող լրատվական կայքերի, որոնք ակտիվորեն ապատեղեկատվություն և քարոզչական բնույթի նյութեր են տարածում Հայաստանի դեմ: Վերջին ժամանակներս ադրբեջանական կողմը նման լրատվական կայք է բացել նաև Հայաստանի վիրտուալ տարածքում՝ .am դոմեյնային տարածքում:

Հայտնի ճշմարտություն է, որ ցանկացած երկիր, հատկապես պատերազմող, պետք է ունենա տեղեկատվական անվտանգության հայեցակարգ, որտեղ ամրագրված կլինեն բոլոր տեղեկատվական վտանգներն ու սպառնալիքները և դրանք հաղթահարելու միջոցները: Ընդ որում՝ պետք է հստակ ամրագրված լինի, թե տեղեկատվական հարձակումների դեպքում ո՞ր կառույցը պետք է ստանձնի պատասխանատվություն: 21-րդ դարում շատ կարևոր են տեղեկատվական զենքերը, քանի որ ինֆորմացիան վայրկյանների ընթացքում հասնում է աշխարհի մի ծայրից մյուսը:

Տեղեկատվական անվտանգության խնդիրները ՀՀ-ում գտնվում են պետության ու շարժական կենտրոնում: Դրա հետ կապված առաջին կարևոր փաստաթուղթը ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգն է: Տեղեկատվական անվտանգությանը նվիրված առանձին բաժին է զետեղված նաև ՀՀ Ազգային Անվտանգության Ռազմավարությունում⁴⁷:

Այսօր առանձնահատուկ հրատապություն են ձեռք բերել ԱԱ բաղադրամաս հանդիսացող Տեղեկատվական անվտանգության (ՏԱ) խնդիրները: Համաձայն ժամանակակից պատկերացումների՝ ազգային անվտանգություն (ԱԱ) հասկացությունը ներկայացնում է երեք բաղադրամասերի՝ ռազմա-քաղաքական անվտանգության, սոցիալ-տնտեսական անվտանգության և

⁴⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, 07.02.2007:

տեղեկատվական անվտանգության ամբողջություն: Այդ բաղադրամասերից որևէ մեկի անտեսումը կամ թերազնահատումը թերի է դարձնում ցանկացած ԱԱ հայեցակարգ: Դրան զուգահեռ, ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և տեղեկատվական ոլորտները ներկայումս ինտեգրվում են, այսինքն՝ ԱԱ բաղադրամասերի միջև սահմանները հաճախ խիստ պայմանական են: Իրենց հերթին ԱԱ վերոհիշյալ ոլորտներն ընդգրկում են և այլ բաղադրամասերի միասնություն են: Մասնավորապես՝ տեղեկատվական անվտանգությունը (SU) ծավալուն և բովանդակալից հասկացություն է, որը ներառում է ոչ միայն տեղեկատվական-տեխնիկական համակարգերի ապահովության խնդիրները, այլև այն ամենը, ինչ վերաբերում է հոգևոր-հոգեբանական, մտավոր-գիտելիքային ոլորտներին⁴⁸:

Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության բաղկացուցիչ մասն է և իր ազդեցությունն է թողնում Հայաստանի Հանրապետության ազգային շահերի պաշտպանվածության վրա, հասարակության և երկրի կենսագործունեության տարբեր բնագավառներում: Սպառնալիքները Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության նկատմամբ և անվտանգության ապահովման ձևերն ընդհանուր են բոլոր բնագավառների համար:

Եզրակացությունում հանրագումարի են բերված ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

Տեղեկատվական հասարակության հետ կապված խնդիրների ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները:

1. Տեղեկատվական հասարակության հիմնական նպատակն իրավական և սոցիալական երաշխիքների ապահովումն է: Դրանց միջոցով քաղաքացին, ուր էլ նա լինի, կկարողանա ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ նպատակային օգտագործման համար:

2. Ներկայումս հասարակական-քաղաքական մտքի մեջ տեղեկատվական հասարակություն գաղափարը սկսում է զբաղեցնել 1970-ական թթ. պոստինդուստրիալ հասարակություն գաղափարի տեղը (ընդհուպ մինչև պոստինդուստրիալ հասարակություն հասկացության հեղինակ Դ.Բելլի աջակցությունը):

3. Տեղեկատվական հասարակության հայեցակարգը ունիկալ է: Մաքուր տեսքով տեղեկատվական հասարակություն ժամանակակից աշխարհում չկա ոչ մի տեղ, և դժվար հավանական է դրա առաջացումն ապագայում: Խոսքը ինդուստրիալացման նոր աստիճանի («ալիքի» Օ. Թոֆֆլերի տերմինաբանությամբ) մասին է, որը ծնեց տեղեկատվական-ինդուստրիալ հասարակություն, որտեղ կա հավասարություն նոր և ավանդական արժեքների ու սոցիալական մեխանիզմների միջև:

⁴⁸ Հարությունյան Գ., Տեղեկատվական անվտանգության որոշ խնդիրների շուրջ, 15.03.2007:

4. Տեղեկատվական հասարակության կառուցվածքում իր ուրույն տեղն ունի տեղեկատվական իշխանություն հասկացությունը: Բանն այն է, որ ներկայումս գնալով մեծանում է տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը քաղաքական գործընթացների, մշակվող և ընդունվող որոշումների, դրանց քարոզչության և իրականացման փուլերի վրա: Այժմ իշխող դիրքեր է գրավում այն քաղաքական գործիչը, որը տիրապետում է լիակատար և ժամանակակից տեղեկատվությանը:

5. «Տեղեկատվական հասարակության» տեսությունը կոչված է ուսումնասիրել քաղաքակրթության զարգացման էական միտումները և դրանք արտացոլել տեսական-աշխարհայացքային հայեցակարգերում: Տեղեկատվական հասարակությունն ինչ-որ իմաստով նոր ձևավորվող պատմամշակութային երևույթ է, և նրա կառուցվածքն արտացոլում է քաղաքակրթության կառուցվածքային արմատական փոփոխությունների ուղղվածությունն ու միտումները:

6. Վերջին տասը տարում մշակվել են Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտի զարգացմանը և հարակից հարցերին վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր, որոնց ամբողջությունն էլ ընկած է տեղեկատվական հասարակության կայացման իրավական խնդիրների հիմքում: Նախածեռնողները և հեղինակները եղել են թե՛ Հայաստանի կառավարությունը, թե՛ տարբեր տեղական և օտարերկրյա կազմակերպություններ: Հարկ է նշել նաև, որ բացի տեղեկատվական տեխնոլոգիաների հետ կապված խնդիրներից՝ ՀՀ օրենսդրությունը և համապատասխան գերատեսչություններ անդրադարձ են կատարում առաջին հերթին տեղեկատվության ստացման մատչելիության խնդիրներին:

7. Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական հասարակության կայացման փուլերն ունեն մի շարք առանձնահատկություններ: Մեր երկրում տեղեկատվական հասարակության կայացումը պայմանականորեն բաժանել ենք երեք հիմնական փուլերի՝ հիմք ընդունելով միջազգային տեղեկատվական գործընթացներին ՀՀ ինտեգրումը, ինչպես նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են համացանցի հասանելիությունը, բնակչության ընդհանուր կրթական մակարդակը և այլն:

8. Հայաստանում տեղեկատվական հասարակության զարգացման մեջ ներգրավված միջոցառումների իրականացումը պետք է ենթադրի ՀՀ կառավարության կողմից գործարար հատվածի և քաղաքացիական հասարակության մասնակցությամբ ծրագրի մշակում, որը կարող է իրականացվել պետական, տարածաշրջանային և գերատեսչական ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև կոնկրետ նախագծերի կատարմանն ուղղված տեղական և արտասահմանյան ներդրումների հիման վրա:

9. Տեղեկատվական հասարակության խնդիրների շարքում հատուկ ուշադրության է արժանի տեղեկատվական պատերազմի և տեղեկատվական անվտանգության հարցերը: Այսօր Հայաստանը երկու մեծ տեղեկատվական պատերազմ է վարում, որոնք չի կարելի համարել մեկ տեղեկատվական

պատերազմի երկու ճակատներ: Խոսքը հայ-թուրքական և հայ-ադրբեջանական տեղեկատվական պատերազմների մասին է:

10. Տեղեկատվական անվտանգությունը սերտորեն կապված է երկրի ազգային անվտանգության հետ: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունն ընդունվում է որպես ուղեցույց պետության ներքին և արտաքին անվտանգության ռազմավարության հիմնական ուղղությունները, մարտահրավերներն ու առաջնահերթությունները ներկայացնելու համար: Ռազմավարության դրույթների վերանայման հաճախականությունը պայմանավորված է երկրում, տարածաշրջանում և աշխարհում ընթացող դինամիկ գործընթացներով, իրավիճակի և քաղաքական գերակայությունների փոփոխություններով:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հաղորդակցության դաշտի կազմակերպումը, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ Երևան, 2009, № 3 (23), էջ 40-45:
2. «Տեղեկատվական հասարակություն» հասկացության վերաբերյալ, Հայաստան «Ֆինանսներ և էկոնոմիկա», Երևան, 2011, № 2 (128), էջ 73-75:
3. Տեղեկատվական հասարակության կայացման իրավական հիմքերի հարցի շուրջ Հայաստան «Ֆինանսներ և էկոնոմիկա», Երևան, 2011 № 4 (130), էջ 55-58:
4. Տեղեկատվական հասարակության մոդելները. Հայկական մոդել, Խմբ. Ա. Ս. Ալեքսանյան ԵՊՀ հրատ. 2011թ. 66 էջ:

АКОП САМВЕЛОВИЧ АКОПЯН

СТАНОВЛЕНИЕ ИНФОРМАЦИОННОГО ОБЩЕСТВА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук

по специальности 23.00.02 – “Политические институты и процессы”.

Защита состоится 27 июня 2011г., в 13.00 часов, на заседании специализированного совета 056 ВАК РА, действующего по адресу:

ул. К.Улнеци 56/6, Ереван 0037, Армения

РЕЗЮМЕ

Политологический анализ проблем информационного общества в XXI веке является прямой необходимостью. Задача диссертации – рассмотреть становление информационного общества в рамках мировой политической мысли, а также этапы становления информационного общества в контексте информационной безопасности, информационных войн и национальной безопасности РА. В этом смысле представленное исследование является первой попыткой рассмотрения системных проблем становления информационного общества в РА с политологической точки зрения. Основной целью диссертации является выявление и целостное представление хода, этапов и особенностей становления информационного общества посредством изучения имеющегося богатого документального материала, статей, опубликованных в научных сборниках, политологических, социологических ценных трудов.

Другая важная цель исследования – разработать модель информационного общества. Цель исследования будет осуществлена посредством решения следующих взаимосвязанных задач:

а) уточнить основные направления анализа информационного общества в контексте традиционных концепций, концепций французской социологической школы и теорий общества о знании.

б) выявить особенности эволюции дискурса информационного общества и возможные тенденции развития в армянской общественной жизни.

Анализ структуры информационного общества в РА более труден по сравнению со структурой обществ предыдущих типов, поскольку основным звеном данного общества являются средства компьютерной коммуникации, которые не являются самостоятельно производимыми единицами, а являются следствием деятельности специфической производственной отрасли. В этом смысле, информационное общество должно указывать на те специальные отличительные черты, которые дадут возможность видеть структуру этого общества.

Анализируя структурные особенности информационного общества в РА, надо отметить, что оно условно состоит из четырех звеньев. Ими являются:

а) органы государственной власти, где главная роль принадлежит правительству;

б) общественные организации, занятые проблемами информационного общества;

в) средства массовой информации, в лице телевидения, радио, прессы, граждан, занятых в этих сферах и др.;

г) четвертое звено состоит из той части граждан, которая в том или ином размере в своей жизнедеятельности применяет информацию, пользуется современными информационно-коммуникационными технологиями, получает образование (в этой группе можно условно включить школьников, студентов, работников школ, высших учебных заведений, научно-исследовательских учреждений и др.).

Важными составляющими построения армянской модели информационного общества являются задачи, связанные с электронным управлением, электронным документооборотом, которые связываются с осуществлением известной программы Малбри. В настоящее время в РА электронный документооборот осуществляется в семи государственных учреждениях, начиная с Аппарата Правительства РА, весь

документооборот Министерства Финансов РА, Министерства Экономики РА, Министерства Регионального Управления РА, Министерства Диаспоры РА, Министерства Иностранных Дел РА, Комитета Государственных Доходов РА и Котайкской областной администрации осуществляется в электронном варианте. В структуре армянской модели информационного общества свое особое место имеют такие уже неразрывно связанные с информационным обществом подсистемы, какими являются: написать электронное письмо правительству, следить за его ходом, существование электронной системы по приему заявок на лицензии, следить за постановлениями премьер-министра, наличие электронной визы (e-visa), электронной подписи и др.

Осуществленный анализ дает возможность составить полное представление об особенностях армянской модели информационного общества, но которое находится в раннем этапе своего становления, поэтому дальнейшее усовершенствование неизбежно.

На пути построения информационного общества в РА особая важность придается проблеме анализа его правовых основ. Говоря правовые основы, понимаем совокупность всех правовых документов, законов, законодательных актов, договоров, соответствующих национальных и международных программ, имеющих отношение с информационным обществом на пути его становления, которые предназначены для решения поставленной задачи.

На пути становления информационного общества в РА создан ряд программ, концепций, приняты соответствующие законы.

Проблемы информационной безопасности в РА находятся в центре внимания государства. Первый важный документ в связи с информационной безопасностью является Концепция информационной безопасности РА. Отдельный раздел посвящен национальной безопасности также в Стратегии Национальной Безопасности РА.

Особую актуальность сегодня приобрели задачи информационной безопасности, являющиеся составляющими Национальной Безопасности.

Согласно современным представлениям, понятие Национальной Безопасности (НБ) представляет собой совокупность трех составных частей: военно-политической безопасности, социально-экономической безопасности и информационной безопасности. Игнорирование или недооценка одной из этих составных частей делает неполным любую концепцию НБ. Параллельно с этим, воено-политическая, социально-экономическая и информационная сферы в настоящем интегрируются, то есть границы между составными частями НБ часто являются условными. В своей очереди, вышеуказанные сферы НБ охватываемы и в единстве других составных частей. В частности, информация безопасность является объемным и содержательным понятием, которое включает не только задачи обеспечения информационно-технических систем, а также все то, что касается духовно-психологической, интеллектуально-научной сфер.

Информационная безопасность Республики Армения является составной частью Национальной безопасности Республики Армения и имеет свое влияние на защищенность национальных интересов Республики Армения, в разных сферах жизнедеятельности общества и страны. Угрозы в отношении информационной безопасности Республики Армения и формы обеспечения безопасности являются общими для всех сфер.

Научная новизна исследования:

а) опираясь на политологические анализы информационного общества, предложено новое определение понятия "информационное общество", согласно которому: "Информационное общество – это целостность сосуществующих в одинаковом информационном пространстве людей, групп и организаций, которые имеют идентичные коммуникационные возможности, а границы этого информационного пространства сопоставимы с границами развитости и доступности информационных технологий". Информационное общество – это следующий этап развития цивилизации, которое характеризуется центральной ролью информационных технологий в общественных отношениях.

б) в работе рассмотрены возможности локализации основных теорий информационного общества.

в) сопоставляя данные изучений политической мысли, а на национальном уровне – опираясь на Стратегию национальной безопасности, в первый раз многостороннему анализу подвержена такая недостаточная разработанная проблема в отечественном политологическом знании, какой является становление информационного общества РА в системе национальной безопасности.

г) рассмотрены преимущества и недостатки новых информационных технологий и моделей управления, документов и имеющих стратегическое значение программ, принятых со стороны властей и государственных органов РА в информационных войнах и проблемах информационной безопасности.

д) рассмотрен процесс становления информационного общества в РА, разделив его на этапы.

Работа состоит из введения, двух глав, заключения, списка литературы.

Общий объем диссертации 166 страниц.

HAKOB HAKOBYAN

FORMATION OF INFORMATION SOCIETY IN THE REPUBLIC OF ARMENIA

Dissertation under 23.00.02 cipher – “Political instituts and processes” aspiring to earn a PhD in Political Science

The public defense of the dissertation will take place on June 27, 2011, at 13.00, in the National Strategic Research Institute under the MoD of RA at the

056 HAC Specialized Chamber session

(Adress: K.Ulnetsi str. 56/6, Yerevan 0037, Armenia)

RESUME

The political analysis of the information society issues is quite necessary in the 21st century. The task of the thesis is to consider the formation of the information society within the framework of the world political thought, as well as to consider the stages of the formation of the information society in the context of information security, information wars and the RA national security. In this terms the presented study is the first experience of the consideration of the systematic issue of the formation of the RA information society from the viewpoint of political sciences. The main purpose of the thesis is to expose and completely present the process of the formation of the information society, its stages and peculiarities on the basis of the study of the available factual rich materials, the articles published in the scientific collections, political-scientific, sociological valuable works, the national security strategy.

The other important purpose of the study is to elaborate the information society model. The purpose of the research will be fulfilled owing to the solution of the following mutually connected tasks:

- a) To specify the main directions of the analysis of the information society in the context of traditional concepts, French sociological school concepts and theories of society knowledge.

- b) To expose the evolution peculiarities of the information society discourse and the possible development tendencies in the Armenian public life.

The analysis of the RA information society structure is more difficult in comparison with the structure of the societies of previous types, because the computer communication means is the basic circle of this society. They are not independently produced units, they are the result of the activities of a unique industrial branch. In this terms the information society should point at those special characterizing features, which will allow to see the structure of this society.

Analyzing the structural peculiarities of the information society in Armenia, it should be mentioned that conditionally it consists of four circles. They are as follows:

- a) State authority bodies, in which the main role belongs to the government;
- b) Public organizations being engaged in the issues of the information society,
- c) Mass media, in the person of TV, radio, press and the citizens being engaged in these spheres, etc.
- d) The fourth circle consists of those citizens who to this or that extent apply information in their vital activities, use modern information-communication technologies, get education/ conditionally we can include school-children, students, employees of schools, higher schools, research institutes, etc./

Issues connected with the electronic document flow and electronic management are the important components of the Armenian model of the construction of the information society. These issues are connected with the implementation of the well-known Malbri program. Today in Armenia the electronic document flow is implemented in seven state bodies: starting from the government's staff all the documents of the Ministries of Finances, Economy, Territorial Administration, Diaspora, Foreign Affairs, the State Revenues Committee and the Kotayk Governor's Office are circulated in an electronic way. Such subsystems as writing an electronic letter to the RA government, the follow-up of the process of that letter, the existence of an electronic system of receiving of licenses claims, follow-up of the decisions of

RA Prime Minister, the availability of an electronic visa (e-visa) and an electronic signature, etc. have their special place in the structure of the Armenian model of the information society.

The conducted analysis gives us an opportunity to have complete imagination about the peculiarities of the Armenian model of the information society, which, of course, is on the early stage of its formation, so the further development and improvement is inevitable.

The issue of the analysis of the legal bases is especially important on the way of the formation of the information society in Armenia. Saying legal bases, we understand the integrity of all the legal documents, laws, legislative acts, contracts, corresponding national and international programs related to the information society on its way of formation.

A number of programs and concepts have been created in Armenia on the way of the formation of the information society, as well as corresponding laws have been adopted.

The issues of the information security in Armenia are in the center of the state's attention. The RA information security concept is the first important document connected with it. A separate chapter is dedicated to information security in the RA National Security Strategy.

Information security (IS) issues being a component of the National Security (NS) became quite urgent today. According to contemporary imaginations, the notion National Security (NS) presents the integrity of the following three components: military-political security, socio-economic security and information security. The neglect or underestimation of one of these components makes any NS system defective. Simultaneously, the military-political, socio-economic and information spheres are in process of integration today, it means that the borders between NS components are often strictly conditional. In their turn, the above-mentioned spheres of the National Security are spacious and unite other components. In particular, Information Security is a voluminous and substantial notion, it includes not only the issues of the information-technical systems

provision, but also everything related to the spiritual-psychological and mental-knowledge spheres.


The Information Security of the Republic of Armenia is a component of the National Security Strategy of the Republic of Armenia and has its influence on the protectability of the national interests of the Republic of Armenia, as well as on different spheres of the vital activity of the country. Threats against the information security of the Republic of Armenia and the forms of security provision are common for all the spheres.

The scientific innovation of the thesis is as follows:

- a) A new definition of the "information society" notion has been suggested, being based on the political science analyses of the information society. According to this suggestion, "The Information Society is an integrity of the people, groups and organizations co-existing in the same information space, who have the same communication possibilities, and the borders of this information space are comparable with the development of information technologies and the borders of accessibility." The information society is the next stage of development of civilization, it is characterized with the central role of information technologies in the public relations;
- b) The possibilities of the localization of the world theories on the information society is considered in the work;
- c) Such an issue as the formation of the RA information society in the National Security System, which was not worth of scientific research attention before, has been analyzed in the work for the first time, comparing the data of the studies of the political thought and being based on the National Security Strategy on the national level;
- d) The advantages and defects of new technologies and models of government contributing to the formation of the information society, the advantages and disadvantages of the documents and programs of strategic importance adopted by the RA authorities and state bodies in the issues of information wars and information security have been considered in the thesis;

e) The process of the formation of the information society in Armenia, as well as its stages have been considered in the work.

The work consists of Introduction, three Chapters, Conclusion and Bibliography. The given thesis consists of 166 pages.

A handwritten signature in cursive script, appearing to read 'A. Hovhannisyan'.